



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<02>> *ԱՆՎԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ* 2011թ.

N *299*

ք. Արմավիր

«ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «Երասխահունի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության մանկավարժական խորհրդի 2011թվականի օգոստոսի 22-ի որոշմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին ուղղված ուղերձը.

որոշում եմ՝

1. «Երասխահունի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել «Երասխահունի Մարտիկ Գևորգյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության:
2. Հաստատել «Երասխահունի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը՝ կապված անվան փոփոխման հետ:
3. «Երասխահունի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ



Handwritten signature

Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ